**ԳՐԱՆՑՎԱԾ Է**

**Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկում**

**ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ**

Digitally signed by Martin Galstyan
Date: 2023.05.31 14:42:17 AMT
Reason: Գրանցված է 31.05.2023թ.

**________________ Մարտին Գալստյան**
**(ստորագրություն,կնիք)**

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
**«ՎՏԲ-Հայաստան Բանկ»ՓԲԸ Միակ բաժնետիրոջ 12.10.2015 №04/2015 որոշմամբ**

**ՓՈՓՈԽՎԱԾ Է**
**«ՎՏԲ-Հայաստան Բանկ»ՓԲԸ Միակ բաժնետիրոջ 28.04.2023 №1/2023 որոշումով**

**Միակ բաժնետիրոջ ներկայացուցիչ, ՎՏԲ Բանկ (ՀԲԸ) Վարչության Ղեկավար-Նախագահի Առաջին Տեղակալ**

**________________ Ա.Ս.Պուչկով**
**(ստորագրություն,կլոր կնիք)**

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
**«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ**
**(«ՎՏԲ-Հայաստան Բանկ»ՓԲԸ)**

Ara Avagyan
Digitally signed by Ara Avagyan
Date: 2023.05.02 11:01:17 +04'00'

**Նոր խմբագրությամբ**
**2023թ.**

**ЗАРЕГИСТРИРОВАН**

**В Центральном банке Республики Армения**

**Председатель Центрального банка РА**

Digitally signed by Martin Galstyan
Date: 2023.05.31 14:45:30 AMT
Reason: Գրանցված է 31.05.2023թ.

**________________ Мартин Галстян**
**(Подпись, гербовая печать)**

**УТВЕРЖДЕН**
**Решением Единственного акционера ЗАО «Банк ВТБ (Армения)» от 12.10.2015 №04/2015**

**ИЗМЕНЕН**
**Решением Единственного акционера ЗАО «Банк ВТБ (Армения)» от 28.04.2023 №1/2023**

**Представитель Единственного акционера, Первый заместитель Президента-Председателя Правления Банка ВТБ (ПАО)**

**________________ А.С.Пучков**
**(Подпись, круглая печать)**

**УСТАВ**
**ЗАКРЫТОГО АКЦИОНЕРНОГО ОБЩЕСТВА**
**«БАНК ВТБ (АРМЕНИЯ)»**
**(ЗАО «Банк ВТБ (Армения)»)**

**В новой редакции**
**2023г.**

**Հաստատված է**

«Հայխնայբանկ» ՓԲԸ
Բաժնետերերի ընդհանուր ժողովի 24.10.2001թ.
թիվ 2 որոշմամբ

**Փոփոխված է**
«Հայխնայբանկ» ՓԲԸ
Բաժնետերերի ընդհանուր ժողովի 23.04.2002թ.
թիվ 01/1.8 Արձանագրությամբ

«Հայխնայբանկ» ՓԲԸ
Բաժնետերերի ընդհանուր ժողովի 24.12.2002թ.
թիվ 01/1.11 Արձանագրությամբ

«Հայխնայբանկ» ՓԲԸ
Բաժնետերերի ընդհանուր ժողովի 10.01.2003թ.
թիվ 01/1.1 Արձանագրությամբ

«Հայխնայբանկ» ՓԲԸ
Բաժնետերերի ընդհանուր ժողովի 18.01.2003թ.
թիվ 01/1.2 Արձանագրությամբ

«Հայխնայբանկ» ՓԲԸ
Բաժնետերերի ընդհանուր ժողովի 12.02.2003թ.
թիվ 01/1.1.2. Արձանագրությամբ

«Հայխնայբանկ» ՓԲԸ
Բաժնետերերի ընդհանուր ժողովի 18.04.2003թ.
թիվ 01/1.1.3. Արձանագրությամբ

«Հայխնայբանկ» ՓԲԸ
Միակ բաժնետիրոջ 03.10.2003թ.
թիվ 5 Որոշմամբ

«Հայխնայբանկ» ՓԲԸ
Բաժնետերերի ընդհանուր ժողովի 20.04.2004թ.
թիվ 2 Արձանագրությամբ

«Հայխնայբանկ» ՓԲԸ
Բաժնետերերի ընդհանուր ժողովի 15.05.2004թ.
Արձանագրությամբ (Որոշում թիվ 04/04)

«Հայխնայբանկ» ՓԲԸ
Բաժնետերերի ընդհանուր ժողովի 27.01.2005թ.
թիվ 01/05 Արձանագրությամբ

«Հայխնայբանկ» ՓԲԸ
Բաժնետերերի ընդհանուր ժողովի 31.08.2005թ.
թիվ 01/05 Արձանագրությամբ

«Հայխնայբանկ» ՓԲԸ
Բաժնետերերի ընդհանուր ժողովի 01.11.2005թ.
թիվ 05/05 Արձանագրությամբ

**Утверждено**

ЗАО “Армсбербанк”
Решением ном. 2 от 24.10.2001г.
Общего собрания акционеров

**Изменено**
ЗАО “Армсбербанк”
Протоколом ном. 01/1.8 от 23.04.2002г.
Общего собрания акционеров

ЗАО “Армсбербанк”
Протоколом ном. 01/1.11 от 24.12.2002г.
Общего собрания акционеров

ЗАО “Армсбербанк”
Протоколом ном. 01/1.1 от 10.01.2003г.
Общего собрания акционеров

ЗАО “Армсбербанк”
Протоколом ном. 01/1.2 от 18.01.2003г.
Общего собрания акционеров

ЗАО “Армсбербанк”
Протоколом ном. 01/1.1.2. от 12.02.2003г.
Общего собрания акционеров

ЗАО “Армсбербанк”
Протоколом ном. 01/1.1.3. от 18.04.2003г.
Общего собрания акционеров

ЗАО “Армсбербанк”
Решением ном. 5 от 03.10.2003г.
Единственного акционера

ЗАО “Армсбербанк”
Протоколом ном. 2 от 20.04.2004г.
Общего собрания акционеров

ЗАО “Армсбербанк”
Протоколом (Решение ном. 04/04) от 15.05.2004г.
Общего собрания акционеров

ЗАО “Армсбербанк”
Протоколом ном. 01/05 от 27.01.2005г.
Общего собрания акционеров

ЗАО “Армсбербанк”
Протоколом ном. 01/05 от 31.08.2005г.
Общего собрания акционеров

ЗАО “Армсбербанк”
Протоколом ном. 05/05 от 01.11.2005г.
Общего собрания акционеров

«Հայխնայբանկ» ՓԲԸ
Բաժնետերերի ընդհանուր ժողովի 22.12.2005թ.
թիվ 06/05 Արձանագրությամբ

ЗАО “Армсбербанк”
Протоколом ном. 06/05 от 22.12.2005г.
Общего собрания акционеров

«Հայխնայբանկ» ՓԲԸ
Բաժնետերերի ընդհանուր ժողովի 27.04.2006թ.
թիվ 01/06 Արձանագրությամբ

ЗАО “Армсбербанк”
Протоколом ном. 01/06 от 27.04.2006г.
Общего собрания акционеров

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
Բաժնետերերի ընդհանուր ժողովի 20.12.2007թ.
թիվ 01/06 Արձանագրությամբ

ЗАО “Банк ВТБ (Армения)”
Протоколом ном. 01/06 от 20.12.2007г.
Общего собрания акционеров

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
Բաժնետերերի ընդհանուր ժողովի 29.04.2009թ.
թիվ 02/09 Արձանագրությամբ

ЗАО “Банк ВТБ (Армения)”
Протоколом ном. 02/09 от 29.04.2009г.
Общего собрания акционеров

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
Միակ բաժնետիրոջ 07.02.2014թ.
թիվ 01/2014 Որոշմամբ

ЗАО “Банк ВТБ (Армения)”
Решением от 07.02.2014г. ном. 01/2014
Единственного акционера

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
Միակ բաժնետիրոջ 12.10.2015թ.
թիվ 04/2015 Որոշմամբ

ЗАО “Банк ВТБ (Армения)”
Решением от 12.10.2015г. ном. 04/2015
Единственного акционера

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
Միակ բաժնետիրոջ 03.03.2017թ.
թիվ 01/2017 Որոշմամբ

ЗАО “Банк ВТБ (Армения)”
Решением от 03.03.2017г. ном. 01/2017
Единственного акционера

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
Միակ բաժնետիրոջ 05.10.2017թ.
թիվ 5/2017 Որոշմամբ

ЗАО “Банк ВТБ (Армения)”
Решением от 05.10.2017г. ном. 5/2017
Единственного акционера

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
Միակ բաժնետիրոջ 01.11.2017թ.
թիվ 7/2017 Որոշմամբ

ЗАО “Банк ВТБ (Армения)”
Решением от 01.11.2017г. ном. 7/2017
Единственного акционера

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
Միակ բաժնետիրոջ 07.12.2017թ.
թիվ 8/2017 Որոշմամբ

ЗАО “Банк ВТБ (Армения)”
Решением от 07.12.2017г. ном. 8/2017
Единственного акционера

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
Միակ բաժնետիրոջ 05.03.2018թ.
թիվ 2/2018 Որոշմամբ

ЗАО “Банк ВТБ (Армения)”
Решением от 05.03.2018г. ном. 2/2018
Единственного акционера

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
Միակ բաժնետիրոջ 27.11.2018թ.
թիվ 7/2018 Որոշմամբ

ЗАО “Банк ВТБ (Армения)”
Решением от 27.11.2018г. ном. 7/2018
Единственного акционера

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
Միակ բաժնետիրոջ 28.04.2023թ.
թիվ 1/2023 Որոշմամբ

ЗАО “Банк ВТБ (Армения)”
Решением от 28.04.2023г. ном. 1/2023
Единственного акционера

## 1. Ընդհանուր դրույթներ

1.1 «ՎՏԲ-Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Բանկ) հանդիսանում է "Հայաստանի Հանրապետության խնայողական բանկ" փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը այն ծավալով և սահմաններում, ինչ ծավալով և սահմաններում, որ նախատեսված է 28.09.2001թ. "Միկա Արմենիա Թրեյդինգ" ՍՊԸ, "Արչ լիմիթեդ" ընկերության և Հայաստանի Հանրապետության միջև կնքված "«Հայխնայբանկ» ՓԲԸ մասնավորեցման մասին" պայմանագրով:

1.2 Բանկի հիմնադիր փաստաթուղթը սույն կանոնադրությունն է, որի պահանջները պարտադիր են Բանկի բաժնետերերի և կառավարման մարմինների համար:

1.3 Իր գործունեության ընթացքում Բանկը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:

1.4 Բանկը համարվում է ստեղծված և ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկում գրանցվելու օրվանից:

1.5 Բանկն իրավունք ունի իրականացնել բանկային գործունեություն և օրենսդրությամբ սահմանված ֆինանսական գործառնություններ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից բանկային գործունեության լիցենզիա ստանալու օրվանից և այդ լիցենզիայի գործողության ընթացքում:

1.6 Բանկը երաշխավորում է իր հաճախորդների բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների պահպանումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

1.7 Բանկի հաճախորդների բանկային ավանդները և Բանկին ի պահ հանձնված նրանց դրամական միջոցները և այլ գույքը կարող է բռնագրավվել, դրանց վրա կարող է կալանք (արգելանք) դրվել, առգրավում կամ բռնագանձում տարածվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով՝ իրավասու պետական մարմինների կողմից:

## 1. Общие положения

1.1. Закрытое акционерное общество «Банк ВТБ (Армения)» (в дальнейшем «Банк») является правопреемником закрытого акционерного общества «Сберегательный банк Республики Армения» в тех объемах и пределах, которые предусмотрены договором «О приватизации ЗАО «Армсбербанк», заключенным 28.09.2001г. между ООО «Мика Армения Трейдинг», обществом «Арч лимитед» и Республикой Армения.

1.2. Учредительным документом Банка является настоящий Устав, требования которого обязательны для акционеров и органов управления Банка.

1.3. Банк в своей деятельности руководствуется Конституцией Республики Армения, законами Республики Армения «О банках и банковской деятельности», «Об акционерных обществах» и иными нормативно правовыми актами.

1.4. Банк считается созданным и приобретает статус юридического лица со дня регистрации в Центральном Банке Республики Армения.

1.5. Банк имеет право осуществлять банковскую деятельность и установленные законодательством Республики Армения финансовые операции со дня получения лицензии на осуществление банковской деятельности, выданной Центральным Банком Республики Армения, и в течение срока ее действия.

1.6. Банк гарантирует своим клиентам сохранность сведений, составляющих банковскую тайну, в установленном законодательством Республики Армения порядке.

1.7. На банковские вклады клиентов Банка и переданные ими на хранение в Банк денежные средства, а также иное имущество, может быть применено взыскание, наложен арест (запрет), распространены конфискация и взыскание только компетентными государственными органами в установленных законодательством Республики Армения случаях и порядке.

1.8 Բանկը պատասխանատվություն չի կրում իրավասու մարմինների կողմից օրենսդրությամբ նախատեսված կարգով հաճախորդի հաշիվների կամ գույքի արգելադրման, առգրավման, բռնագրավման կամ բռնագանձում տարածելու հետևանքով հաճախորդի կրած վնասների համար:

1.8. Банк не несет ответственности за убытки, понесенные клиентом вследствие обращения компетентных органов в предусмотренном законодательством Республики Армения порядке в Банк относительно наложения запрета, ареста, конфискации или взыскания на его счета или имущество.

1.9 Հայաստանի Հանրապետությունը պատասխանատվություն չի կրում Բանկի պարտավորությունների համար, եթե վերջինիս անունից գործող պետական մարմինները դրանք չեն ստանձնել որպես երրորդ անձ, կամ չեն երաշխավորել դրանց կատարումը որպես երաշխավոր: Բացի այս դրույթից, Բանկի և Հայաստանի Հանրապետության փոխհարաբերությունները կարգավորվում են նաև 28.09.2001թ. "Միկա Արմենիա Թրեյդինգ" ՍՊԸ, "Արչ լիմիթեդ" ընկերության և Հայաստանի Հանրապետության միջև կնքված "«Հայխնայբանկ» ՓԲԸ մասնավորեցման մասին" պայմանագրով:

1.9. Республика Армения не несет ответственности по обязательствам Банка, если действующие от ее имени государственные органы не приняли их на себя в качестве третьего лица или не гарантировали их выполнение в качестве гаранта. Помимо этого, взаимоотношения между Банком и Республикой Армения регулируются также и договором «О приватизации ЗАО «Армсбербанк»», заключенным 28.09.2001г. между ООО «Мика Армения Трейдинг», обществом «Арч лимитед» и Республикой Армения.

1.10 Բանկն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով (միջոցներով), եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.10. Банк несет ответственность по своим обязательствам всем принадлежащим ему по праву собственности имуществом (средствами), если законодательством Республики Армения не предусмотрено иное.

1.11 Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկը պատասխանատվություն չի կրում Բանկի պարտավորությունների համար, եթե դրանք չի ստանձնել որպես երրորդ անձ, կամ չի երաշխավորել դրանց կատարումը որպես երաշխավոր:

1.11. Центральный Банк Республики Армения не несет ответственности по обязательствам Банка, если он не принял их на себя в качестве третьего лица или не гарантировал их выполнение в качестве гаранта.

1.12 Բանկն ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք (միջոցներ), Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ֆիրմային անվանում և խորհրդանիշ, իր անվամբ և խորհրդանիշով կլոր կնիք, դրոշմներ, բլանկներ և համարային կնիքներ բանկի տարածքային ստորաբաժանումների համար:

1.12. Банк имеет имущество (средства), принадлежащее ему по праву собственности, зарегистрированные в установленном законодательством Республики Армения порядке фирменное наименование и эмблему, круглую печать со своим наименованием и эмблемой, штампы, бланки и номерные печати для территориальных подразделений Банка.

1.13 Բանկն իրավունք ունի իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, լինել հայցվոր կամ պատասխանող Հայաստանի Հանրապետության դատական բոլոր ատյաններում:

1.13. Банк вправе от своего имени приобретать и осуществлять имущественные и личные неимущественные права, нести обязанности, быть истцом или ответчиком в судебных инстанциях Республики Армения.

1.14 Բանկի գլխամասային գրասենյակի գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, 0006, ք. Երևան, Շենգավիթ համայնք, Մանանդյան փ. 33/14, ք. Երևան, Շենգավիթ համայնք, Մանանդյան փ. 33/3 շենք, 1/3, ք. Երևան, Շենգավիթ համայնք, Մանանդյան փ. 33/3, 1/4, ք. Երևան, Շենգավիթ համայնք, Մանանդյան փ. 33/3, շենք, 2/2 շին., ք. Երևան, Շենգավիթ համայնք, Մանանդյան փ. 33/3 շենք, 1/6 շին., ք. Երևան, Շենգավիթ համայնք, Մանանդյան փ. 33/3 շենք, թիվ 1/5 շին., ք. Երևան, Շենգավիթ համայնք, Մանանդյան փ. 33/35, ք. Երևան, Շենգավիթ համայնք, Մանանդյան փ. 33/3 շենք, 44/1 շին., ք. Երևան, Շենգավիթ համայնք, Մանանդյան փ. 33/3 շենք, 44 շին., ք. Երևան, Շենգավիթ համայնք, Մանանդյան փ. 33/3 շենք, ք. Երևան, Շենգավիթ համայնք, Մանանդյան փ. 33/3 շենք, 1/1 տարածք, ք. Երևան, Շենգավիթ համայնք, Մանանդյան փ. 33/3 շենք, 51 ավտոկայանատեղի, ք. Երևան, Շենգավիթ համայնք, Մանանդյան փ. 33/3 շենք, բն. 45, իրավաբանական (փոստային) հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, 0006, ք. Երևան, Շենգավիթ համայնք, Մանանդյան փ. 33/3:

1.15 Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝
հայերեն՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» Փակ Բաժնետիրական Ընկերություն,
ռուսերեն՝ Закрытое Акционерное Общество «Банк ВТБ (Армения)»
անգլերեն՝ “VTB Bank (Armenia)” Closed Joint- Stock Company

1.16 Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
ռուսերեն՝ ЗАО «Банк ВТБ (Армения)»
անգլերեն՝ "VTB Bank (Armenia)" CJSC

1.17 Բանկը կրում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ բանկին վերապահված իրավունքներ ու պարտականություններ, անկախ դրանք սույն կանոնադրությամբ նախատեսված լինելու կամ չլինելու փաստից, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան է սահմանված:

1.18 Բանկի կառավարման մարմիններն են՝ Բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝

1.14 Место нахождения головного офиса Банка: Республика Армения, 0006, г. Ереван, община Шенгавит, ул. Манандян 33/14, г. Ереван, община Шенгавит, ул. Манандян 33/3, ном. 1/3, г. Ереван, община Шенгавит, ул. Манандян 33/3, ном. 1/4, г. Ереван, община Шенгавит, ул. Манандян, дом 33/3, строение ном. 2/2, г. Ереван, община Шенгавит, ул. Манандян 33/3, ном. 1/6, г. Ереван, община Шенгавит, ул. Манандян 33/3, ном. 1/5, г. Ереван, община Шенгавит, ул. Манандян, дом 33/35, г. Ереван, община Шенгавит, ул. Манандян 33/3, ном. 44/1, г. Ереван, община Шенгавит, ул. Манандян 33/3, ном. 44, г. Ереван, община Шенгавит, ул. Манандян 33/3, г. Ереван, община Шенгавит, ул. Манандян 33/3, 1/1., г. Ереван, община Шенгавит, ул. Манандян 33/3 ном. 51 парковка, г. Ереван, община Шенгавит, ул. Манандян, дом 33/3, кв. 45, юридический (почтовый) адрес: Республика Армения, 0006, г. Ереван, община Шенгавит, ул. Манандян, дом 33/3.

1.15. Полное фирменное наименование Банка:

на армянском языке:«ՎՏԲ - Հայաստան Բանկ» Փակ Բաժնետիրական Ընկերություն
на русском языке:Закрытое Акционерное Общество «Банк ВТБ (Армения)»
на английском языке:«VTB Bank (Armenia)» Closed Joint-Stock Company

1.16. Сокращенное наименование Банка:

на армянском языке:«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
на русском языке: ЗАО «Банк ВТБ (Армения)»
на английском языке:«VTB Bank (Armenia)» CJSC

1.17. Банк пользуется правами и несет обязанности, отнесенные законодательством Республики Армения к банкам, независимо от того, предусмотрены они настоящим Уставом или нет, за исключением тех случаев, когда законодательством Республики Армения предусмотрено иное.

1.18. Органами управления Банка являются Общее Собрание Акционеров (в дальнейшем «Собрание»), Совет Банка (в дальнейшем

ժողով), Բանկի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ), Բանկի Գործադիր տնօրենը (այսուհետ՝ Գլխավոր տնօրեն) և Տնօրինությունը:

«Совет»), Исполнительный директор (в дальнейшем «Генеральный директор») Банка и Директорат.

1.19 Բանկը պարտավոր է ապահովել Բանկի գլխամասային գրասենյակում և տարածքային ստորաբաժանումներում գտնվող դրամական միջոցների, արժեթղթերի, թանկարժեք մետաղների, նյութական այլ արժեքների, փաստաթղթերի հուսալի պահպանությունը: Այդ նպատակով Բանկը պարտավոր է ունենալ սեփական պահպանության անձնակազմ կամ պահպանությունը պայմանագրային կարգով հանձնարարել համապատասխան թույլտվություն ունեցող հիմնարկներին կամ իրավաբանական անձանց: Սեփական պահպանության անձնակազմի համար Բանկը կարող է ծառայողական զենք ձեռք բերել «Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

1.19. Банк обязан обеспечить надежную сохранность денежных средств, ценных бумаг, драгоценных металлов, иных материальных ценностей и документов, находящихся в головной конторе Банка и его территориальных подразделениях. Для этого Банк обязан иметь собственную охранную службу, либо на договорных условиях поручить охрану учреждениям или юридическим лицам, имеющим соответствующее разрешение. Банк может приобрести табельное оружие для собственной охранной службы по основаниям и в порядке, установленными Законом Республики Армения «Об оружии».

## 2. Բանկի տարածքային ստորաբաժանումները

## 2. Территориальные подразделения Банка

2.1 Բանկն իրավունք ունի Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում ստեղծել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, որոնք Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնելու դեպքում գրանցվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ արտասահմանում՝ տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները:

2.1. Банк имеет право учреждать на территории Республики Армения и заграницей филиалы и представительства, которые в случае учреждения на территории Республики Армения регистрируются в порядке, установленном законодательством Республики Армения, а заграницей – в порядке, установленном законодательством данной страны, с соблюдением требований законодательства Республики Армения.

2.2 Բանկի տարածքային ստորաբաժանումները գործում են Բանկի կողմից հաստատված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված կանոնադրությունների հիման վրա:

2.2. Территориальные подразделения Банка действуют на основании уставов, утвержденных Банком и зарегистрированных в установленном законодательством Республики Армения порядке.

2.3 Բանկի տարածքային ստորաբաժանումների ստեղծումը, գրանցումը և լուծարումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.3. Создание, регистрация и ликвидация территориальных подразделений Банка осуществляются в порядке, установленном законодательством Республики Армения.

2.4 Մասնաճյուղը իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Բանկի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումն է, որը Բանկի անունից իրականացնում է բանկային գործունեություն և մասնաճյուղի կանոնադրությամբ նախատեսված ֆինանսական գործառնություններ, ինչպես նաև

2.4. Филиал Банка является его обособленным подразделением, не имеющим статуса юридического лица и расположенным вне местонахождения Банка, которое от имени Банка осуществляет банковскую деятельность и предусмотренные уставом филиала финансовые операции, а также представительские функции.

ներկայացուցչական գործառույթներ:

2.5 Ներկայացուցչությունը իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Բանկի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումն է, որը ներկայացնում է Բանկի շահերը և իրականացնում դրանց պաշտպանությունը, առանց բանկային գործունեություն կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ֆինանսական գործառնություններ իրականացնելու:

2.5. Представительство Банка является его обособленным подразделением, не имеющим статуса юридического лица и расположенным вне местонахождения Банка, которое представляет и защищает интересы Банка без осуществления банковской деятельности или финансовых операций, определенных законодательством Республики Армения.

2.6 Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գույքը (միջոցները) հաշվառվում է ինչպես Բանկի հաշվեկշռում, այնպես էլ դրանց առանձին հաշվեկշիռներում:

2.6. Имущество (средства) филиалов и представительств учитывается как на балансе Банка, так и на их отдельных балансах.

2.7 Բանկի տարածքային ստորաբաժանումների ղեկավարները նշանակվում են Բանկի կողմից, գործում են տարածքային ստորաբաժանման կանոնադրության և Բանկի կողմից տրված լիազորագրի հիման վրա: Ընդ որում, Բանկի կողմից լիազորագիրը կարող է տրվել երեք տարուց ոչ ավել ժամկետով:

2.7. Руководители территориальных подразделений Банка назначаются Банком, действуют на основании устава территориального подразделения и доверенности, выданной Банком. При этом Банк может выдать доверенность на срок не более 3 лет.

2.8 Բանկի տարածքային ստորաբաժանումների ղեկավարները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լրիվ նյութական պատասխանատվություն են կրում իրենց պաշտոնեական սխալ գործողությունների կամ անգործության հետևանքով (I) Բանկին պատճառված վնասների, (II) Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտման համար Բանկի նկատմամբ նշանակված տուգանքների, (III) երրորդ անձանց հանդեպ Բանկի ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Բանկի կողմից երրորդ անձին որպես վնասի հատուցում կամ տուժանք վճարելու հետևանքով Բանկի կրած վնասների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկի կրած վնասների մեծությունը չի գերազանցում ռիսկային գործարքների համար բանկային պրակտիկայում սովորական համարվող:

2.8. Руководители территориальных подразделений Банка в установленном законодательством Республики Армения порядке несут полную материальную ответственность за последствия своих ошибочных служебных действий или бездействия, а именно: (I) – причиненные Банку убытки, (II) – штрафы, назначенные Банку за нарушение законодательства Республики Армения, (III) – убытки, понесенные Банком вследствие возмещения ущерба или уплаты штрафа третьему лицу ввиду невыполнения или ненадлежащего выполнения Банком обязательств в отношении третьего лица, за исключением тех случаев, когда величина понесенных Банком убытков не превышает размера потерь для рисковых сделок, считающегося обычным в банковской практике.

2.9. Բանկի «Վարձու աշխատողների աշխատանքի ընդունման, նույն գործատուի մոտ այլ աշխատանքի փոխադրման ու աշխատանքից ազատման» հրամանագիրքը վարելու և պահպանելու պարտականությունը կրող անձին նշանակում է Բանկի Գլխավոր տնօրենը:

2.9. Лицо, ответственное за ведение и хранение книги приказов Банка «О приеме на работу, переводе на другую работу у того же работодателя, освобождении с занимаемой должности наемных работников» назначается Генеральным директором.

## 3. Բանկի կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունները և այլ գործարքներ

3.1 Բանկը բանկային գործունեության լիցենզիայի հիման վրա ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ կարող է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և նորմատիվ-իրավական ակտերով բանկերին թույլատրված բոլոր ֆինանսական գործառնությունները, մասնավորապես.

I. ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ;
II. տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում` հիփոթեքային վարկեր, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ;
III. տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ (վարկային նամակներ);
IV. բացել և վարել հաշիվներ, այդ թվում` այլ բանկերի թղթակցային հաշիվներ;
V. մատուցել այլ վճարահաշվարկային ծառայություններ և (կամ) այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվները;
VI. թողարկել, գնել (զեղչել), վաճառել և սպասարկել արժեթղթեր, վճարային փաստաթղթեր, ճանապարհային չեկեր, քարտեր և այլ գործիքներ, կատարել նման այլ գործառնություններ;
VII. իրականացնել ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեություն;
VIII. մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց արժեթղթերն ու ներդրումները (հավատարմագրային (լիազորագրային) կառավարում);
IX. գնել, վաճառել և կառավարել թանկարժեք մետաղների բանկային (ստանդարտացված) ձուլակտորներ և հուշադրամ;
X. գնել և վաճառել (փոխանակել) արտարժույթ, այդ թվում` կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ;
XI. իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ);
XII. ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեթղթեր,
XIII. մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն;
XIV. ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն:

## 3. Финансовые операции и другие сделки, осуществляемые Банком

3.1. Банк на основании лицензии на осуществление банковской деятельности может совершать с резидентами и нерезидентами все финансовые операции, разрешенные банкам законодательством Республики Армения и иными нормативно-правовыми актами, в частности:

I. принимать вклады до востребования и срочные вклады;
II. предоставлять коммерческие и потребительские кредиты, в том числе ипотечные кредиты, осуществлять финансирование задолженностей или коммерческих операций, факторинг;
III. предоставлять банковские гарантии и аккредитивы (кредитные письма);
IV. открывать и вести счета, в том числе корреспондентские счета других банков;
V. оказывать иные платежно-расчетные услуги и (или) иным способом обслуживать счета клиентов;
VI. выпускать, покупать (дисконтировать), продавать и обслуживать ценные бумаги, платежные документы, дорожные чеки, карточки и другие инструменты, совершать иные подобные операции;
VII. осуществлять инвестиционную и подписную деятельность;
VIII. предоставлять услуги финансового агента (представителя), управлять ценными бумагами и вкладами других лиц [доверительное (трастовое) управление];
IX. покупать, продавать банковские (стандартизированные) слитки драгоценных металлов и памятные монеты из них и управлять ими;
X. покупать и продавать (обменивать) иностранную валюту, в том числе заключать фьючерсы, опционы и иные подобные сделки в драмах и иностранной валюте;
XI. осуществлять финансовую аренду (лизинг);
XII. принимать на хранение драгоценные металлы, камни, ювелирные изделия, ценные бумаги, документы и иные ценные бумаги;
XIII. предоставлять финансовые и инвестиционные консультации;
XIV. создавать и обслуживать информационную систему кредитоспособности клиентов, осуществлять деятельность по возврату задолженностей.

3.2 Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի թույլտվությամբ Բանկը կարող է իրականացնել նաև սույն կանոնադրության 3.1 կետում ուղղակիորեն չնախատեսված գործունեություն կամ գործառնություններ, եթե դրանք բխում են կամ սերտորեն կապված են բանկային գործունեության կամ սույն կանոնադրության 3.1 կետում նախատեսված գործառնությունների հետ:

3.2. С разрешения Центрального Банка Республики Армения Банк также может осуществлять прямо не предусмотренную пунктом 3.1 настоящего Устава деятельность или операции, если таковые вытекают или тесно связаны с банковской деятельностью или с совершением операций, предусмотренных пунктом 3.1. настоящего Устава.

3.3 Բանկը կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է բանկային գործունեություն իրականացնելու համար:

3.3. Банк может заключить любую гражданско-правовую сделку, которая необходима или целесообразна для осуществления банковской деятельности.

3.4 Բանկը չի կարող իրականացնել արտադրական, առևտրային և ապահովագրական գործունեություն, եթե բանկերի համար դրանք թույլատրված չեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ այլ նորմատիվ-իրավական ակտերով:

3.4. Банк не может осуществлять производственную, коммерческую и страховую деятельность, если она не разрешена банкам законодательством Республики Армения или иными нормативно-правовыми актами.

3.5 Բանկը ֆինանսական գործառնությունները կատարում է ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ արտարժույթով:

3.5. Банк совершает финансовые операции как в драмах Республики Армения, так и в иностранной валюте.

3.6 Բանկն ինքն է որոշում ներգրավվող ավանդների, իր կողմից տրամադրվող վարկերի, սեփական արժեթղթերի տոկոսադրույքները և իր ծառայությունների միջնորդավճարների չափը:

3.6. Процентные ставки по привлекаемым вкладам, предоставляемым кредитам, собственным ценным бумагам и величина комиссионных вознаграждений за оказываемые услуги устанавливаются Банком самостоятельно.

3.7 Բանկի և հաճախորդի միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ նորմատիվ-իրավական ակտերով, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերով և կողմերի միջև կնքված պայմանագրով, այդ թվում՝ հրապարակային պայմանագրերով:

3.7. Отношения между Банком и клиентом регулируются законами, иными нормативно-правовыми актами Республики Армения, а также внутренними правовыми актами Банка и заключенными между сторонами договорами, в том числе публичными договорами.

## 4. Ինվեստիցիոն քաղաքականության սահմանափակումներ

## 4. Ограничения инвестиционной политики

4.1Բանկը կարող է իրականացնել ինվեստիցիոն (ներդրումային) գործունեություն՝ իր կամ հաճախորդի անունից և հաշվին բաժնետոմսեր, պարտատոմսեր և ներդրումային այլ արժեթղթեր գնել կամ այլ կերպ ձեռք բերել, օտարել, ինչպես նաև տեղաբաշխման նպատակով ձեռք բերել այլ անձանց (թողարկողների) բաժնետոմսերը, պարտատոմսերը և ներդրումային այլ արժեթղթերը (բաժանորդագրական

4.1. Банк вправе заниматься инвестиционной деятельностью – от своего имени или имени клиента, а также за свой счет или за счет клиента покупать или иным способом приобретать акции, облигации и иные инвестиционные ценные бумаги, отчуждать их, а также приобретать у других лиц (эмитентов) акции, облигации и иные инвестиционные ценные бумаги (подписная

գործունեություն):

Բանկը չի կարող տեղաբաշխել որևէ անձի արժեթղթեր և միաժամանակ այդ անձին տվյալ արժեթղթերից բխող պարտավորությունները կատարելու համար վարկեր տրամադրել:

4.2 Առանց Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի նախնական համաձայնության Բանկին արգելվում է այնպիսի գործարքներ կամ գործառնություններ իրականացնելը, որոնց արդյունքում բանկի մասնակցությունը՝

I մեկ այլ անձի (ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ) կանոնադրական կապիտալում 4.99 տոկոս և ավելին է,

II մեկ անձի (ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ) կանոնադրական կապիտալում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 15 %-ը,

III բոլոր անձանց (ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ) կանոնադրական կապիտալում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 35 %-ը:

Սույն կետով նախատեսված սահմանափակումները չեն տարածվում Բանկի նկատմամբ ստանձնած և չկատարված պարտավորության դիմաց տվյալ անձի կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռք բերման վրա: Ընդ որում Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի համաձայնությունը չստանալու դեպքում Բանկը պարտավոր է օտարել հիշյալ մասնակցությունը՝ ձեռք բերման պահից վեց կամ տասներկու (եթե օտարման ժամկետը երկարաձգվել է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից) ամսվա ընթացքում:

Սույն կետով նախատեսված կարգով Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը պահանջվում է յուրաքանչյուր նոր գործարքի կամ գործարքների իրականացման դեպքում, որոնց արդյունքում Բանկի մասնակցությունը մեկ այլ կամ միևնույն անձի կանոնադրական կապիտալում գերազանցում է 9 տոկոսը, 15 տոկոսը, 25 տոկոսը, 35 տոկոսը, 50 տոկոսը, 70 տոկոսը կամ կազմում է 100 տոկոս:

## 5. Բանկի կանոնադրական հիմնադրամը, այլ հիմնադրամներ

5.1 Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 63 775 674 000 (վաթսուներեք միլիարդ յոթ

деятельность) – с целью размещения.

Банк не может размещать ценные бумаги какого-либо лица и одновременно предоставлять этому лицу кредит для исполнения обязательств по данным ценным бумагам.

4.2. Банку без предварительного согласия Центрального Банка Республики Армения запрещается совершение таких сделок и операций, в результате которых участие Банка:

I. в уставном капитале какого-либо лица (резидента или нерезидента) составит 4,99 процентов;

II. в уставном капитале какого-либо лица (резидента или нерезидента) превысит 15% общего капитала Банка;

III. в уставном капитале всех лиц (резидентов и нерезидентов) превысит 35% общего капитала Банка.

Ограничения, предусмотренные настоящей статьей, не распространяются на приобретение участия в уставном капитале лица, имеющего перед Банком принятые и невыполненные обязательства. При этом Банк, в случае неполучения согласия Центрального Банка Республики Армения, обязан произвести отчуждение упомянутого участия в течение шести или двенадцати месяцев (если срок отчуждения продлен Центральным Банком Республики Армения) с момента его приобретения.

Предварительное согласие Центрального Банка Республики Армения в предусмотренном настоящим пунктом порядке требуется при осуществлении каждой новой сделки или сделок, в результате которых участие Банка в уставном капитале какого-либо лица или того же лица превышает 9%, 15%, 25%, 35%, 50%, 70% либо составляет 100%.

## 5. Уставный капитал и другие фонды Банка

5.1 Уставный капитал Банка составляет 63 775 674 000 (шестьдесят три миллиарда семьсот

հարյուր յոթանասունհինգ միլիոն վեց հարյուր յոթանասունչորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որը բաղկացած է յուրաքանչյուրը 10 800 Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով 5 905 155 (հինգ միլիոն ինը հարյուր հինգ հազար հարյուր հիսունհինգ) հատ լրիվ վճարված սովորական անվանական բաժնետոմսերից:

семьдесят пять миллионов шестьсот семьдесят четыре тысячи) драмов Республики Армения, который состоит из 5 905 155 (пять миллионов девятсот пять тысяч сто пятьдесят пять) полностью оплаченных обыкновенных именных акций, номинальной стоимостью 10 800 (десять тысяч восемьсот) драмов Республики Армения каждая.

5.2 Բանկը կարող է ավելացնել կանոնադրական կապիտալի չափը տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացմամբ կամ սույն կանոնադրությամբ հայտարարված լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ: Բանկի հայտարարված (լրացուցիչ թողարկման ենթակա) բաժնետոմսերի քանակը կազմում է 592 594 (հինգ հարյուր իննսուներկու հազար հինգ հարյուր իննսունչորս) հատ սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 10 800 (տասը հազար ութ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով: Դրանք կարող են տեղաբաշխվել անվանական կամ շուկայական գնով:

5.2 Банк может увеличить размер уставного капитала путем увеличения номинальной стоимости размещенных акций либо размещения объявленных настоящим Уставом дополнительных акций. Количество объявленных (подлежащих дополнительному выпуску) акций Банка составляет 592 594 (пятьсот девяносто две тысячи пятьсот девяносто четыре) обыкновенных акций номинальной стоимостью 10 800 (Десять тысяч восемьсот) драмов Республики Армения каждая. Они могут быть размещены по номинальной или рыночной стоимости.

5.3 Բանկի արտոնյալ բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքի տեսակարարար կշիռը կանոնադրական կապիտալում չի կարող ավել լինել 25 %-ից:

5.3. Удельный вес номинальной стоимости привилегированных акций Банка в уставном капитале не может быть больше 25%.

5.4 Բանկը, իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո, կարող է շահույթի մի մասը ներդնել կանոնադրական կապիտալում՝ բաժնետերերի միջև տեղաբաշխելով նոր բաժնետոմսեր կամ ավելացնելով տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքը:

5.4. После обобщения финансовых итогов своей деятельности, Банк может вложить часть своей прибыли в уставный капитал, разместив среди акционеров новые акции или увеличив номинальную стоимость размещенных акций.

5.5 Բանկում ստեղծվում է պահուստային ֆոնդ (հիմնադրամ) փաստացի համալրված կանոնադրական կապիտալի 25%-ի չափով, որն օգտագործվում է Բանկի կրած կորուստները (վնասները) ծածկելու, Բանկի թողարկած պարտատոմսերը մարելու համար, եթե Բանկի շահույթը այդ նպատակին չի բավարարում:

5.5. В Банке создается резервный фонд (капитал) в размере 25% фактически оплаченного уставного капитала, который используется для покрытия убытков (потерь) Банка, погашения выпушенных Банком облигаций, если прибыли Банка для этой цели недостаточно.

5.6 Պահուստային ֆոնդը (հիմնադրամը) ձևավորվում է Բանկի շահույթից տարեկան մասհանումների միջոցով՝ մինչև սահմանված չափերին հասնելը: Պահուստային ֆոնդին (հիմնադրամին) կատարվող մասհանումները սահմանվում է տարեկան զուտ շահույթի 5 % չափով:

5.6. Формирование резервного фонда (капитала) осуществляется путем годовых отчислений из прибыли Банка до достижения им установленного размера. Отчисления в резервный фонд (капитал) устанавливаются в размере 5% от суммы годовой чистой прибыли Банка.

5.7 Բանկը իրավական ակտերով սահմանված կարգով ստեղծում է հիմնական միջոցների, արժեթղթերի, թանկարժեք մետաղների և արտարժույթի վերագնահատման, անհուսալի վարկերի և դեբիտորական պարտքերի դուրս գրման ֆոնդեր (պահուստաֆոնդեր):

5.7. Банк в установленном правовыми актами порядке создает фонды (резервные фонды) переоценки основных средств, ценных бумаг, драгоценных металлов и иностранной валюты, списания безнадежных кредитов и дебиторских задолженностей.

5.8 Ժողովի որոշմամբ կարող են ստեղծվել նաև այլ ֆոնդեր (հիմնադրամներ), որոնք նպատակ ունեն նպաստել Բանկի տնտեսական զարգացմանը և Բանկի աշխատողների սոցիալ-տնտեսական պահանջմունքների բավարարմանը:

5.8. По решению Собрания могут создаваться и другие фонды (капиталы) с целью содействия экономическому развитию Банка и удовлетворению социально-экономических потребностей работников Банка.

5.9 Այլ ֆոնդերի (հիմնադրամների) ձևավորումն ու օգտագործումը, դրանց հատկացումների կարգը և չափերը որոշվում են Ժողովի կողմից:

5.9. Формирование и использование других фондов (капиталов), а также порядок и размер отчислений в них определяются Собранием.

## 6. Բանկի բաժնետոմսերը

## 6. Акции Банка

6.1 Բանկի բաժնետոմսերը բաժնետերերի միջև տեղաբաշխվում են փակ բաժանորդագրության ձևով: Թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխման գինը դրանց անվանական արժեքն է կամ Խորհրդի կողմից որոշվող շուկայական արժեքը:

6.1. Акции Банка размещаются среди акционеров в форме закрытой подписки. Цена размещения выпущенных акций – это их номинальная стоимость или определяемая Советом рыночная стоимость.

6.2 Բաժնետոմսերի ձեռք բերման դիմաց վճարման միջոցը Հայաստանի Հանրապետության դրամն է: Թողարկվող բաժնետոմսերը կարող են ձեռք բերվել նաև դրանք բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսերով փոխարկելու միջոցով:

6.2. Средством оплаты акций являются драмы Республики Армения. Выпускаемые акции также могут быть приобретены путем конвертации конвертируемых облигаций в акции.

6.3 Թողարկվող բաժնետոմսերի ձեռք բերման դիմաց վճարումը պետք է կատարվի տեղաբաշխման գնի 100 տոկոսի չափով, բաժնետոմսերի թողարկման որոշմամբ սահմանված տեղաբաշխման ժամկետի ընթացքում:

6.3. Оплата за приобретение выпускаемых акций должна быть осуществлена в размере 100% цены размещения в течение срока размещения акций, установленного решением об их выпуске.

6.4 Բանկի մեկ սովորական բաժնետոմսը դրա սեփականատիրոջը տալիս է Ժողովում մեկ ձայնի իրավունք: Բանկի յուրաքանչյուր բաժնետիրոջը պատկանող բաժնետոմսերի քանակը չի սահմանափակվում:

6.4. Одна обыкновенная акция Банка дает ее владельцу право одного голоса на Собрании. Количество акций, принадлежащих одному акционеру Банка, не ограничивается.

6.5 Բանկի կողմից բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսեր երբևէ տեղաբաշխած լինելու դեպքում Բանկը պարտավոր է հայտարարված բաժնետոմսերի համապատասխան քանակությունը առաջին հերթին փակ բաժանորդագրությամբ տեղաբաշխել նշված պարտատոմսերը լրացուցիչ թողարկվող բաժնետոմսերի փոխարկելու նպատակով:

6.5. В случае если Банк когда-либо размещал облигации, конвертируемые в акции, то он обязан, с целью конвертации указанных облигаций в дополнительно размещенные акции, разместить соответствующее количество объявленных акций, в первую очередь путем закрытой подписки.

6.6 Շրջանառության մեջ առկա՝ բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսերի փոխարկումն ապահովելուց հետո Բանկը կարող է փակ բաժանորդագրությամբ տեղաբաշխել հայտարարված մյուս բաժնետոմսերը: Բանկի բաժնետերը լրացուցիչ թողարկվող բաժնետոմսերի ձեռք բերման առաջնահերթության իրավունք ունի:

6.7 Բանկի բաժնետոմսերի յուրաքանչյուր տեղաբաշխման արդյունքներն ամփոփելուց և կանոնադրական հիմնադրամի նոր չափը Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկում գրանցելուց հետո Բանկի բաժնետերերի ռեեստրում բաժնետիրոջ անձնական հաշվում կատարվում են համապատասխան գրանցումներ:

6.8 Բանկի բաժնետոմսերի երկրորդային տեղաբաշխման արդյունքում նոր սեփականատիրոջ սեփականության իրավունքը ծագում, իսկ նախկին սեփականատիրոջ իրավունքը դադարում է բաժնետերերի ռեեստրում համապատասխան փոփոխություն կատարելուց հետո:

6.9 Բանկի բաժնետերերի ռեեստրը վարում է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և նորմատիվ-իրավական ակտերով սահմանված կարգով:

6.10 Բանկը չի կարող բաժնետոմսեր թողարկել իր տնտեսական գործունեությամբ առաջացած պարտքերի մարման համար, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

## 7.Բանկի պարտատոմսերը և այլ արժեթղթերը

7.1 Բանկը կարող է ազատ կամ փակ բաժանորդագրությամբ թողարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պարտատոմսեր, այդ թվում սովորական բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսեր:

7.2 Բանկի պարտատոմսերի թողարկումը կատարվում է Խորհրդի որոշմամբ, որում սահմանվում են պարտատոմսերի մարման ձևը, ժամկետները և պայմանները:

7.3 Բանկը իրավունք ունի Խորհրդի որոշմամբ թողարկել մուրհակներ, չեկեր, ավանդային

6.6. После обеспечения конвертации находящихся в обращении облигаций, конвертируемых в акции, Банк может путем закрытой подписки разместить другие объявленные акции. Акционеры Банка имеют право первоочередного приобретения дополнительно размещаемых акций Банка.

6.7. После подведения итогов каждого размещения и регистрации новой величины уставного капитала в Центральном Банке Республики Армения, в реестре акционеров Банка на личном счете акционера производится соответствующая регистрация.

6.8. В результате вторичного размещения акций, право собственности нового владельца возникает, а право собственности предыдущего владельца – прекращается, после внесения соответствующих изменений в реестр акционеров Банка.

6.9. Реестр акционеров Банка ведется Центральным депозитарием Армении в порядке, установленном законодательством и нормативно-правовыми актами Республики Армения.

6.10. Банк не может выпускать акции для погашения долгов, образовавшихся в результате его экономической деятельности, за исключением случаев, предусмотренных законодательством Республики Армения.

## 7. Облигации и другие ценные бумаги Банка

7.1. Банк может путем открытой или закрытой подписки выпускать предусмотренные законодательством Республики Армения облигации, в том числе облигации, конвертируемые в обыкновенные акции.

7.2. Выпуск облигаций Банка осуществляется по решению Совета, которым устанавливаются форма, сроки и условия их погашения.

7.3. Банк имеет право по решению Совета выпускать векселя, чеки, депозитные

սերտիֆիկատներ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ արժեթղթեր:

7.4 Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի երկրորդային տեղաբաշխման արդյունքում նոր սեփականատիրոջ սեփականության իրավունքը ծագում, իսկ նախկին սեփականատիրոջ իրավունքը դադարում է Բանկի անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրում համապատասխան փոփոխություն կատարելուց հետո:

7.5 Բանկի անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրը վարում է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ նորմատիվ ակտերով սահմանված կարգով:

## 8. Բանկի բաժնետերերը

8.1 Բանկը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար, եթե այդպիսիք չի ստանձնել որպես երրորդ անձ կամ երաշխավոր:

8.2 Բանկի բաժնետերը պարտավոր է՝

I. բաժնետոմսերի թողարկման որոշմամբ սահմանված ժամկետներում լրիվ վճարել իր բաժնետոմսերի արժեքը;

II. ձեռնպահ մնալ Բանկի հաճախորդների և Բանկի գործունեության վերաբերյալ գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հրապարակումից կամ այլ կերպ այլ անձանց դրանք հայտնի դարձնելուց;

III. Բանկի հետ հարաբերություններում ենթարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, այլ իրավական ակտերի և սույն կանոնադրության պահանջներին:

8.3 Բանկի քվերակության իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերը իրավունք ունի՝

I. անձամբ կամ ներկայացուցչի կամ իր բաժնետոմսերի անվանական սեփականատիրոջ միջոցով մասնակցել Ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով, ըստ իր բաժնետոմսերի քանակի;

II. անձամբ կամ ներկայացուցչի կամ իր բաժնետոմսերի անվանական սեփականատիրոջ միջոցով մասնակցել Բանկի կառավարմանը,

сертификаты и иные предусмотренные законодательством Республики Армения ценные бумаги.

7.4. После внесения изменений в реестр владельцев именных ценных бумаг Банка, соответствующих результатам вторичного размещения облигаций и иных ценных бумаг Банка, право собственности нового владельца возникает, а право предыдущего владельца – прекращается.

7.5. Реестр владельцев именных ценных бумаг Банка ведется Центральным депозитарием Армении в порядке, установленном законодательством и иными нормативными актами Республики Армения.

## 8. Акционеры Банка

8.1. Банк не несет ответственности по обязательствам своих акционеров, если не принял на себя таковые как третье лицо или гарант.

8.2. Акционер Банка обязан:

I. полностью оплатить стоимость принадлежащих ему акций в сроки, установленные решением о выпуске акций;

II. воздерживаться от разглашения или сообщения в иной форме другим лицам сведений о клиентах и деятельности Банка, являющиеся тайной;

III. в отношениях с Банком подчиняться требованиям законодательства Республики Армения, иных правовых актов и настоящего Устава.

8.3. Акционер – владелец голосующих акций Банка имеет право:

I. лично, либо через представителя или номинального держателя своих акций участвовать в Собрании с правом голоса по всем вопросам, входящим в компетенцию Собрания, в соответствии с количеством принадлежащих ему акций;

II. лично, либо через представителя или номинального держателя своих акций участвовать в управлении Банком в случаях, предусмотренных законодательством или иными

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ այլ նորմատիվ ակտերով սահմանված դեպքերում՝ մասնակցող անձի մասնագիտական որակավորման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի դրական եզրակացության առկայության դեպքում;

III. ստանալ շահաբաժիններ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից;

IV. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն;

V. ծանոթանալ Բանկի հաշվեկշռին, ֆինանսական և հարկային հաշվետվություններին;

VI. Բանկի չբաշխված շահույթի հաշվին Բանկի կանոնադրական հիմնադրամի չափն ավելացնելիս անվճար ստանալ համապատասխան քանակությամբ սովորական բաժնետոմսեր;

VII. Բանկի լուծարման դեպքում ստանալ Բանկի գույքի (միջոցների) իրեն հասանելիք մասը;

VIII. մյուս բաժնետերերին նախնական ծանուցմամբ գնման հնարավորություն ապահովելով օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը;

IX. կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված այլ գործողություններ:

8.4 Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից և այլ մասնակցությունը ձեռք է բերվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

нормативными актами Республики Армения, – при наличии положительного заключения Центрального Банка Республики Армения о профессиональной квалификации участвующего лица;

III. получать дивиденды с образовавшейся от деятельности Банка прибыли;

IV. в установленном законодательством Республики Армения порядке получать информацию о деятельности Банка;

V. знакомиться с балансом, финансовыми и налоговыми отчетами Банка;

VI. при увеличении уставного капитала Банка бесплатно получать соответствующее количество обыкновенных акций за счет нераспределенной прибыли Банка;

VII. в случае ликвидации Банка получить причитающуюся ему часть имущества (средств) Банка;

VIII. с предварительным извещением других акционеров и обеспечением им возможности покупки акций отчуждать либо иным способом передавать другим лицам акции, являющиеся их собственностью;

IX. совершать другие действия, отнесенные к нему законодательством.

8.4. Значительное и иное участие в уставном капитале Банка приобретается в порядке, установленном законодательством Республики Армения.

## 9. Բանկի շահույթի բաշխումը

9.1 Տարեկան գործունեության արդյունքում Բանկի ստացած համախառն եկամտի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ թույլատրված նվազեցումների դրական տարբերությունը՝ հարկվող շահույթը ենթակա է հարկման՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության համաձայն:

9.2 Բանկի զուտ շահույթը որոշվում է որպես Բանկի ստացած համախառն եկամտի, կատարված բոլոր նվազեցումների (ներառյալ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությամբ չնվազեցվող) և վճարված շահութահարկի դրական տարբերություն:

9.3 Զուտ շահույթի բաշխումն իրականացվում է

## 9. Распределение прибыли Банка

9.1. Налогооблагаемая прибыль, т.е. положительная разница между валовым доходом, полученным Банком в результате его годовой деятельности, и разрешенными законодательством Республики Армения вычетами, подлежит налогообложению в соответствии с налоговым законодательством Республики Армения.

9.2. Чистая прибыль Банка определяется как положительная разница между полученным валовым доходом Банка, всеми произведенными вычетами (включая не предусмотренные налоговым законодательством Республики Армения вычеты) и уплаченным налогом на прибыль.

9.3. Распределение чистой прибыли

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Բաժնետերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ զուտ շահույթը կարող է չբաշխվել և մնալ Բանկի տնօրինության տակ:

осуществляется в порядке, установленном законодательством Республики Армения. Решением Общего Собрания акционеров чистая прибыль может не распределяться и оставаться в распоряжении Банка.

## 10. Բանկի կառավարման մարմինները ժողով

## 10. Органы управления Банка. Собрание.

10.1 Ժողովը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է:

10.1. Собрание является высшим органом управления Банка.

10.2 Ժողովները կարող են լինել հերթական (տարեկան) կամ արտահերթ:

10.2. Собрания могут быть очередными (годовыми) или внеочередными.

10.3 Տարեկան ժողովը գումարվում է ֆինանսական տարվա ավարտից հետո երկուսից վեց ամսվա ընթացքում:

10.3. Годовое Собрание созывается в срок от двух до шести месяцев после окончания финансового года Общества.

10.4 Արտահերթ ժողովները գումարվում են Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Գլխավոր տնօրենի, Տնօրինության, Բանկի աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Բանկի առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

10.4. Внеочередные Собрания созываются решением Совета – по собственной инициативе, или по требованию Генерального директора, Директората, лица, осуществляющего аудит Банка, или акционера (акционеров), владеющего (владеющих) по состоянию на момент представления требования не менее чем 10% голосующих акций.

10.5 Գլխավոր տնօրենի, Տնօրինության, Բանկի աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Բանկի առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) արտահերթ ժողով գումարելու մասին ներկայացրած պահանջի առկայության դեպքում Խորհուրդը պետք է արտահերթ ժողովը գումարի պահանջը ներկայացնելու պահից՝ 45 օրվա ընթացքում:

10.5. В случае представления требования о созыве внеочередного Собрания Генеральным директором, Директоратом, лицом, осуществляющим аудит Банка, или акционером (акционерами), владеющим (владеющими) по состоянию на момент представления требования не менее чем 10% голосующих акций, Совет обязан созвать внеочередное Собрание в течение 45 дней с момента представления требования.

10.6 Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան ժողով գումարելու մասին որոշման ընդունումը և ավելի ուշ, քան ժողովի գումարումից 45 օր առաջ:

10.6. Список акционеров, имеющих право на участие в Собрании, составляется на основании данных реестра акционеров. Дата составления списка акционеров, имеющих право на участие в Собрании, не может быть установлена ранее даты принятия решения о созыве Собрания, и более чем за 45 дней до даты созыва Собрания.

10.7 Ժողովի որոշումները կարող են ընդունվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

10.7. Решения Собрания могут быть приняты в порядке заочного голосования (опроса), за исключением установленных законодательством Республики Армения случаев.

10.8 Եթե ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում են ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ:

10.8. Если Собрание созывается заочным голосованием, то дата составления списка акционеров, имеющих право на участие в нем, устанавливается не менее чем за 35 дней до даты созыва Собрания.

10.9 Ժողովի նիստը հեռակա կարգով գումարելու դեպքում, ժողովի օրակարգը հաստատվելուց հետո, Խորհրդի կողմից որոշված անձը հեռակա կարգով գումարվող ժողովի անցկացումից առնվազն 2 օր առաջ բաժնետերերին է տրամադրում Խորհրդի կողմից հաստատված ժողովի օրակարգի վերաբերյալ նյութերը և որոշումների նախագծերը քվեաթերթիկի տեսքով: Նյութերը կարող են տրամադրվել առձեռն, էլեկտրոնային փոստի, ֆաքսի և հեռահաղորդակցության այլ միջոցներով:

10.9. После утверждения повестки дня Собрания, в случае его созыва в порядке заочного голосования, лицо, определенное Советом, не менее чем за 2 дня до проведения Собрания в порядке заочного голосования предоставляет акционерам в виде бюллетеней заочного голосования материалы и проекты решений, касающиеся утвержденной Советом повестки дня Собрания.
Материалы могут быть предоставлены путем личного вручения, по электронной почте, факсу и иными телекоммуникационными средствами.

10.10 Բաժնետերերը քվեարկում են «Կողմ», «Դեմ» կամ «Ձեռնպահ» բառերից որևէ մեկի դիմաց համապատասխան նշում կատարելու և քվեաթերթիկը ստորագրելու միջոցով: Բաժնետերերի կողմից լրացված (քվեարկված) քվեաթերթիկները ուղարկվում են Բանկի իրավաբանական հասցեով՝ ժողովի գումարման օրվանից 3 օրվա ընթացքում: Քվեաթերթիկները ուղարկվում են պատվիրված նամակով (առձեռն) և (կամ) ֆաքսի միջոցով: Խորհրդի կողմից որոշված անձը քվեաթերթիկները ստանալուց հետո 2 օրվա ընթացքում ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում է արձանագրություն: Հեռակա քվեարկությամբ որոշումը համարվում է ընդունված, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված տվյալ որոշման ընդունման համար բավարար քանակի «Կողմ» ձայներ հավաքելու դեպքում:

10.10. Акционеры голосуют, ставя соответствующую пометку перед одним из слов «За», «Против» или «Воздержался» и подписывая бюллетень. Заполненные акционерами бюллетени отправляются по юридическому адресу Банка в течение 3 дней со дня созыва заседания Собрания. Бюллетени голосования отправляются заказным письмом, (вручаются лично) и (или) по факсу. Определенное Советом лицо в течение 2 дней после получения бюллетеней подводит итоги голосования и составляет протокол. Решение в порядке заочного голосования считается принятым, если в его пользу собрано такое количество голосов «За», которое удовлетворяет количеству голосов, установленному законодательством Республики Армения и настоящим Уставом для принятия данного решения.

10.11. Ժողովին մասնակցելու իրավունք ունեն հետևյալ անձինք՝
ա) բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) սեփականատեր հանդիսացող մասնակիցները՝ իրենց պատկանող ձայների քանակով,
բ) բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և բանկի կանոնադրությամբ սահմանված

10.11. На очном заседании Собрания имеют право участвовать следующие лица:
а) участники-владельцы обыкновенных (простых) акций с количеством принадлежащих им голосов,
б) акционеры-владельцы привилегированных акций с количеством голосов, соответствующих количеству принадлежащих им привилегированных акций и их номинальной стоимости – в случаях, установленных законодательством Республики Армения и уставом Банка,
в) члены Совета, Генеральный директор, члены Директората с правом совещательного голоса;

դեպքերում,
գ) Բանկի խորհրդի անդամները, Գլխավոր տնօրենը, Տնօրինության անդամները խորհրդակցական ձայնի իրավունքով,
դ) բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները՝ որպես դիտորդ.
ե) բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ընդհանուր ժողովի օրակարգի հարցերում).
զ) Կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ որպես դիտորդ:

г) члены подразделения внутреннего аудита – в качестве наблюдателя;
д) лицо, осуществляющее внешний аудит Банка – в качестве наблюдателя (если его аудиторское заключение внесено в повестку общего собрания);
е) представители Центрального Банка Республики Армения в качестве наблюдателей;

10.12. Բանկի ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում: Նման դեպքերում ժողովի նիստերի անցկացման կարգը նույնպես կարգավորվում է ժողովի կողմից հաստատված ժողովի վարման Կարգով, հաշվի առնելով հեռախոսային, հեռուստատեսային և այլ կապի միջոցների տեխնիկական հնարավորությունները:
Ժողովի քարտուղարը նիստից հետո հինգ օրվա ընթացքում կազմում է նիստի արձանագրությունը, որը ստորագրվում է ժողովի Նախագահի և քարտուղարի կողմից:

10.12. Собрание может принять решения на таком Заседании, во время которого все участники могут общаться друг с другом посредством телефонной, телевизионной или иной связи в режиме реального времени. Подобное заседание не считается заседанием, проведенным в заочном порядке. В таких случаях порядок проведения заседаний Собрания Банка также регулируется Порядком ведения Собрания, утвержденным решением Собрания, учитывая технические возможности телефонной, телевизионной или иной связи.

Секретарь Собрания в течение 5 дней после заседания составляет протокол заседания, который подписывается Председателем и секретарем Собрания.

10.13. Բանկի ժողովի որոշումները կարող են ձևակերպվել Բանկի միակ բաժնետիրոջ գրավոր որոշման տեսքով: Իրավաբանական անձ հանդիսացող Բաժնետիրոջ որոշումը, պետք է ընդունվի իրավաբանական անձի (բաժնետիրոջ) կանոնադրությամբ նախատեսված, համապատասխան իրավասություններով օժտված մարմնի կողմից:

10.13. Решения Собрания Банка могут быть оформлены в виде письменного решения единственного акционера Банка. Решение акционера, являющегося юридическим лицом, должно быть принято со стороны органа, наделенного соответствующими полномочиями согласно Уставу юридического лица (акционера).

## 11. Ժողովի իրավասությունները

11.1 Ժողովի բացառիկ իրավասություններն են՝

I. Բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, Բանկի կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,
II. Բանկի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,
III. Բանկի լուծարումը,
IV. Բանկի ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշռի հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,

## 11. Компетенции Собрания

11.1. К исключительной компетенции Собрания относятся:

I. утверждение Устава Банка, внесение в него изменений и дополнений, утверждение Устава Банка в новой редакции;
II. принятие решения о реорганизации Банка;
III. ликвидация Банка;
IV. утверждение сводного, промежуточного и ликвидационного балансов, назначение Ликвидационной комиссии Банка;
V. утверждение количественного состава Совета, избрание его членов и досрочное

V. Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցը Բանկի արտահերթ ժողովներում կարող է քննարկվել, եթե արտահերթ ժողովը որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,

VI. հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,

VII. բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով Բանկի կանոնադրական հիմնադրամի չափի մեծացումը, հայտարարված բաժնետոմսերի ծավալների սահմաններում,

VIII. Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

IX. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթի և վնասի բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը, տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,

X. Ժողովի վարման կարգի հաստատումը,

XI. հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,

XII. Բանկի կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը,

XIII. տեղաբաշխված բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացումը), բաժանումը,

XIV. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը,

XV. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքման մասին որոշման ընդունումը,

XVI. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նախկինում տեղաբաշխված Բանկի բաժնետոմսերի հետգնման մասին որոշման ընդունումը,

XVII. Խորհրդի նախագահի և անդամների աշխատանքի վարձատրության պայմանների սահմանումը,

XVIII. օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման

прекращение их полномочий. Вопросы утверждения количественного состава Совета и избрания его членов рассматриваются исключительно на годовых Собраниях. Вопрос избрания членов Совета может рассматриваться на внеочередных Собраниях, если внеочередное Собрание приняло решение о досрочном прекращении полномочий Совета либо его отдельных членов.

VI. определение предельного размера объема объявленных акций;

VII. увеличение размера уставного капитала Банка путем увеличения номинальной стоимости акций или размещения дополнительных акций в пределах объема объявленных акций;

VIII. утверждение лица, осуществляющего внешний аудит Банка:

IX. утверждение годовых финансовых отчетов, принятие решения о распределении прибыли и убытков Банка, принятие решения о выплате годовых дивидендов, утверждение размера годовых дивидендов;

X утверждение порядка ведения Собрания;

XI. формирование счетной комиссии,

XII. определение формы сообщения Банком сведений и материалов акционерам;

XIII. консолидация и дробление размещенных акций;

XIV. принятие решений о заключении крупных сделок в случаях, предусмотренных законодательством Республики Армения;

XV. принятие решений о заключении сделок при наличии заинтересованности, в случаях, предусмотренных законодательством Республики Армения ;

XVI. принятие решений о выкупе ранее размещенных акций Банка в случаях, предусмотренных законодательством Республики Армения;

XVII. определение условий оплаты труда Председателя и членов Совета;

XVIII. принятие решений о неприменении преимущественного права на приобретение акций в случаях, предусмотренных законодательством Республики Армения;

XIX. утверждение порядка деятельности Совета и других правовых актов, относящихся по законодательству Республики Армения к компетенции Собрания;

XX. осуществление иных полномочий, предусмотренных законодательством Республики Армения.

ընդունումը,

XIX. Խորհրդի գործունեության կարգի և այլ իրավական ակտերի հաստատումը, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ժողովի իրավասությունն են,

XX. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

11.2 Սույն կանոնադրության 11.1 կետի (II), (VIII), (IX), (XII-XVI) ենթակետերում թվարկված հարցերով ժողովը որոշումներ է ընդունում միայն Խորհրդի ներկայացմամբ:

11.2. Решения по вопросам, перечисленным в подпунктах (II), (VIII), (IX), (XII-XVI) пункта 11.1. настоящего Устава, Собрание принимает только по представлению Совета.

11.3 Որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ սույն կանոնադրության 11.1 կետի (I), (II), (IV), (VI), (XIV) ենթակետերով սահմանված հարցերի, որոնց վերաբերյալ որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող քվերակող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով և կանոնադրության 11.1 կետի (III), (XVI) ենթակետերով սահմանված հարցերի, որոնց վերաբերյալ որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող քվերակող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

11.3. Решения Собрания принимаются простым большинством голосов участвующих на нем владельцев голосующих акций, за исключением вопросов, установленных подпунктами (I), (II), (IV), (VI) (XIV) пункта 11.1. настоящего Устава, решения по которым принимаются ¾ голосов владельцев участвующих на Собрании голосующих акций, и подпункта (III) и (XVI) пункта 11.1. настоящего Устава, в отношении которых решение принимается ¾ голосов владельцев участвующих на Собрании голосующих акций, но не менее ⅔ голосов владельцев голосующих акций.

11.4 Սույն կանոնադրության 11.1. կետի (II,III) և (IX) ենթակետերով թվարկված հարցերի որոշումները ժողովը ընդունում է բացառապես առերես կարգով:

11.4 Решения по вопросам, перечисленным в подпунктах (II-III) и (IX) пункта 11.1. настоящего Устава Собрание принимает исключительно в очном порядке.

11.5 Սույն կանոնադրության 11.1 կետում նշված հարցերով որոշումների ընդունումը հանդիսանում է ժողովի բացառիկ իրավասությունը և չեն կարող փոխանցվել Խորհրդին, Գործադիր մարմնին, գլխավոր հաշվապահին:

11.5. Принятие решений по перечисленным в пункте 11.1. настоящего Устава вопросам является исключительной компетенцией Собрания и не может быть передано Совету, Исполнительному органу, Главному бухгалтеру.

11.6 Ժողովի քննարկմանը չեն կարող դրվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ սույն կանոնադրության 11.1 կետով ժողովի իրավասությանը չվերապահված հարցեր:

11.6. На рассмотрение Собрания не могут быть вынесены вопросы, которые законодательством Республики Армения или пунктом 11.1. настоящего Устава не отнесены к компетенции Собрания.

11.7 Ժողովի կողմից ընդունված որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները բաժնետերերին հայտնվում են պատվիրված նամակներով՝ որոշման ընդունման օրվանից 45 օրվա ընթացքում:

11.7. Сведения о решениях, принятых Собранием, а также результаты голосования сообщаются акционерам заказными письмами в течение 45 дней со дня принятия решения.

## 12. Խորհուրդ

## 12. Совет

12.1 Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

12.1. Совет осуществляет общее руководство деятельностью Банка в пределах вопросов, отнесенных законодательством Республики Армения к компетенции Совета.

12.2 Խորհրդի անդամ կարող է լինել Հայաստանի Հանրապետության քաղաքացի կամ օտարերկրյա պետության քաղաքացի հանդիսացող այն գործունակ անձը, որը բավարարում է հետևյալ առանձնացված պայմաններից բոլորին, այն է՝ (I) չունի դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար (II) դատարանի կողմից չի զրկվել ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից, (III) սնանկ չի ճանաչվել և չունի չմարված պարտավորություններ, (IV) անցյալում չի կատարել այնպիսի արարք, որը Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի հաստատված ուղեցույցով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձը՝ որպես բանկի ղեկավար, չի կարող պատշաճորեն կառավարել Բանկի գործունեության համապատասխան ոլորտը, կամ նրա գործողությունները կարող են հանգեցնել բանկի սնանկացմանը, ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը, (V) որակավորումը կամ մասնագիտական գիտելիքները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի սահմանած մասնագիտական կամ որակավորման համապատասխանության չափանիշներին. (VI) քրեական գործով ներգրավված չեն որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:

12.2. Членами Совета могут быть любые дееспособные граждане Республики Армения и иностранных государств, удовлетворяющие всем ниже перечисленным условиям, а именно: (I) – не имеют судимости за совершенные умышленные преступления, (II) – не лишены судом права занимать должности в финансовых, банковских, налоговых, таможенных, коммерческих, хозяйственных, юридической сферах, (III) – не признаны банкротами и не имеют непогашенных обязательств, (IV) – в прошлом не совершили такое деяние, которое, по мнению Центрального Банка Республики Армения, обоснованному утвержденной им директивой, дает основание полагать, что данное лицо в качестве руководителя Банка не может надлежащим образом управлять соответствующей сферой деятельности Банка или его действия могут повлечь банкротство Банка и/или ухудшение финансового состояния Банка, либо опорочить авторитет и деловую репутацию Банка, (V) – квалификация или профессиональные знания соответствуют установленным Центральным Банком Республики Армения критериям профессионального или квалификационного соответствия, (VI) – не привлечены по уголовному делу в качестве подозреваемого, обвиняемого или подсудимого.

12.3 Խորհրդի անդամները ընտրվում են տարեկան ժողովի կողմից, իսկ անդամների լիազորությունները վաղակետ դադարեցնելու դեպքում արտահերթ ժողովի կողմից: Ընդհանուր ժողովին բանկի խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել բաժնետերերը, ինչպես նաև խորհուրդը: Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանվում է ժողովի կողմից և չի կարող մեկ տարուց պակաս լինել: Խորհրդի անդամները չեն կարող միմյանց հետ փոխկապակցված լինել:

12.3. Члены Совета избираются годовым Собранием в порядке, установленном законодательством Республики Армения и настоящим Уставом. Кандидатуры на должность Члена Совета могут представлять акционеры и (или) Совет. Количество представляемых кандидатур не ограничивается и Собрание проводит голосование по каждой представленной кандидатуре в порядке, установленном законодательством Республики Армения и настоящим Уставом. Члены Совета не могут являться аффилированными лицами. Срок полномочий членов Совета устанавливается Собранием и не может быть менее 1 года.

Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում Խորհրդի

При досрочном прекращении полномочий члена Совета новый член Совета назначается на

նոր անդամը նշանակվում է Խորհրդի ազատված անդամի պաշտոնավարման մնացած ժամկետով, եթե տվյալ ժամկետը մեկ տարուց ավել է: Եթե մնացած ժամկետը մեկ տարուց պակաս է Խորհրդի նոր անդամը նշանակվում է ժողովի որոշմամբ սահմանված ժամկետով, բայց ոչ պակաս մեկ տարուց:

оставшийся срок пребывания в должности освобожденного члена Совета, если данный срок больше одного года. Если оставшийся срок пребывания в должности освобожденного члена Совета меньше одного года, новый член Совета назначается на срок установленный решением Собрания, но не менее одного года.

12.4 Բանկի այն բաժնետերերը, որոնք ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել Խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցչին: Յուրաքանչյուր բաժնետեր խորհրդում կարող է զբաղեցնել միայն մեկ տեղ:

12.4. Акционеры Банка, которые на дату составления списка акционеров, имеющих право на участие в Собрании, владеют 10 и более процентами размещенных голосующих акций Банка, имеют право без выборов быть включенными в состав Совета или назначить туда своего представителя. Каждый акционер может занимать в Совете только одно место.

12.5 Խորհրդի կազմը սահմանվում է առնվազն 5 հոգի:

12.5. Совет состоит не менее чем из 5 человек.

12.6 Խորհրդի անդամը պարտավոր է Խորհրդին և Բանկի աուդիտն իրականացնող անձին տրամադրել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տեղեկություններ Բանկի գործարքներում իր շահագրգռվածության, Բանկի հետ գործարք իրականացնող անձանց հետ իր փոխկապակցվածության մասին:

12.6. Член Совета обязан предоставить Совету и лицу, осуществляющему аудит Банка, предусмотренные законодательством Республики Армения сведения о своей заинтересованности в сделках Банка, о своей аффилированности с лицами, совершающими сделки с Банком.

12.7 Բանկի խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, առնվազն երկու ամիսը մեկ: Խորհրդի նիստերը գումարվում են Խորհրդի նախագահի կողմից՝ իր նախաձեռնությամբ կամ Խորհրդի անդամի, Գլխավոր տնօրենի (Տնօրինության), ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի Խորհրդի, ինչպես նաև Բանկի քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 5 կամ ավելի տոկոս ունեցող մասնակցի (մասնակիցների) գրավոր պահանջով:

12.7. Заседание Совета созываются по мере необходимости, но не реже одного раза в два месяца. Заседания Совета созываются Председателем Совета – по собственной инициативе или по письменному требованию члена Совета, Генерального директора, Директората, руководителя подразделения внутреннего аудита, лица, проводящего внешний аудит Банка, Совета Центрального Банка Республики Армения, а также акционера (акционеров), владеющего (владеющих) 5-ю и более процентами голосующих акций (долей, паев).

Նիստի հրավիրման պահանջը ներկայացվում է Խորհրդի նախագահին և/կամ քարտուղարին: Նախագահը պարտավոր է մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշում կայացնել Նիստի անցկացման մասին: Պահանջ ներկայացրած անձը երկու աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացվում է ընդունված որոշման վերաբերյալ:

Требование о созыве Заседания представляется Председателю Совета и/или Секретарю. Председатель обязан в течение 1 (одного) рабочего дня принять решение о проведении Заседания. Лицо, представившее требование, уведомляется о принятом решении в письменной форме в течение 2 (двух) рабочих дней.

Խորհրդի անդամները և Նիստին հրավիրված անձինք Նիստի հրավիրման մասին գրավոր կամ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցվում են Խորհրդի նախագահի կամ Անդամի կամ քարտուղարի կողմից Նիստի հրավիրման

Члены Совета и приглашенные на Заседание лица уведомляются Председателем или одним из членов Совета или Секретарем Совета о созыве Заседания письменно или по электронной почте не позднее 2 (двух) дней до созыва Заседания.

օրվանից ոչ ուշ քան 2 օր առաջ:

Ծանուցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

ա) Նիստի հրավիրման օրը, վայրը և ժամանակը (հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ քվեարկված քվեաթերթիկների ուղարկման վերջին ամսաթիվը),
բ) Նիստի օրակարգի հարցերը:

Խորհրդի քարտուղարը, ծանուցման հետ միաժամանակ Խորհրդի անդամներին է տրամադրում նաև օրակարգի հարցերին վերաբերվող փաստաթղթերի պատճենները:
Խորհրդի անդամն իրավունք ունի, Նիստի հրավիրման օրվանից առնվազն մեկ օր առաջ, Խորհրդի նախագահին ուղարկել օրակարգի վերաբերյալ գրավոր առաջարկներ:
Նիստի օրակարգը հաստատվում է տվյալ նիստում:

Խորհրդի անդամն իրավունք ունի մինչև Նիստի հրավիրման օրը Խորհրդի նախագահին գրավոր տեղեկացնել վերջինիս մասնակցության անհնարինության վերաբերյալ, նշելով պատճառները:

Նիստը բացում է Խորհրդի նախագահը, որը առաջարկում է հաստատել Նիստի օրակարգը:

Նախագահի բացակայության կամ մասնակցության անհնարինության դեպքում Խորհրդի անդամները իրենց կազմից նշանակում են Խորհրդի նիստի նախագահող: Օրակարգի հաստատումից հետո Խորհուրդը անցնում է օրակարգի հարցերի քննարկմանը:

Խորհրդի նիստի բոլոր հարցերի քննարկումը տեղի է ունենում Բանկի Գլխավոր տնօրենի պարտադիր ներկայությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ քննարկվում է Գլխավոր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման և վարձատրության պայմանների հաստատման հարցերը:

Բանկի Գլխավոր տնօրենը նիստին մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով:
Խորհրդի նախագահի որոշմամբ Նիստին կարող են մասնակցել նաև Բանկի այլ աշխատակիցներ, բաժնետերեր (բաժնետերերի ներկայացուցիչներ):

Խորհրդի նախագահը, ինչպես նաև Խորհրդի

Уведомление должно содержать следующие сведения:

а) дату, место и время созыва Заседания (при созыве Заседания путем заочного голосования – дату последнего дня отправки проголосованных бюллетеней);

б) вопросы повестки дня Заседания.

Секретарь Совета, одновременно с уведомлением, предоставляет Членам Совета копии всех документов, касающихся вопросов повестки.

Член Совета вправе направить Председателю Совета предложения по повестке Заседания в письменной форме– не позднее 1 (одного) дня до созыва Заседания.
Повестка Заседания утверждается на данном Заседании.

Член Совета вправе до дня созыва Заседания письменно сообщить Председателю Совета о невозможности своего участия на Заседании, указав обосновывающие причины.

Заседания открывает Председатель Совета, который предлагает утвердить повестку заседания.

В случае его отсутствия или невозможности участия на заседании Совета члены Совета назначают из своего числа председательствующего на заседании Совета. После утверждения повестки заседания Совет приступает к обсуждению вопросов повестки.

Обсуждение всех вопросов заседания Совета должно происходить только при обязательном присутствии Генерального директора Банка, за исключением тех случаев, когда обсуждается вопрос о досрочном прекращении полномочий, а также вопроса об утверждении условий оплаты Генерального директора Банка.

Генеральный директор Банка участвует на Заседаниях с правом совещательного голоса.
По решению Председателя Совета в работе заседания Совета могут также участвовать иные сотрудники Банка, акционеры (представители акционеров).

Председатель Совета, а также любой из членов

ցանկացած անդամ Նիստի ընթացքում կարող է առաջարկություններ անել Խորհրդի նիստի անցկացման կարգի վերաբերյալ, այդ թվում որոշման կայացման հետաձգման և ընթացակարգային բնույթի այլ հարցերի վերաբերյալ: Նիստի անցկացման կարգի հարցի վերաբերյալ որոշումը կայացվում է անմիջապես:

Совета в ходе заседания могут вносить предложения по порядку проведения заседания Совета, в том числе, об отсрочке принятия решения, и другие вопросы процедурного характера. Решения по вопросам порядка проведения заседания принимаются немедленно.

Խորհրդի Նախագահը և անդամները, Նիստի ներկաները մասնակցում են օրակարգի ցանկացած հարցի և որոշման քննարկմանը: Քննարկումներն ավարտվում են բանավեճը դադարեցնելու մասին որոշման կայացմամբ:

Председатель и члены Совета, присутствующие на заседании, участвуют в обсуждении и решении любого вопроса повестки дня. Обсуждение прекращается после принятия решения о прекращении прений.

Քննարկմանը կարող են մասնակցել նաև Նիստում ներկա գտնվող Բանկի աշխատակիցները, ինչպես նաև այլ անձինք, նիստին հրավիրվածները:

В обсуждении могут принимать участие присутствующие на заседании работники Банка, а также другие лица, приглашенные на заседание.

Օրակարգի հարցերի քննարկման ավարտից հետո, Խորհրդի Նիստը փակվում է Նախագահի կողմից:

После завершения рассмотрения вопросов повестки дня, заседание Совета закрывается Председателем Совета.

